

ԲԱՆԱԶԵՎ

«Երևան-2025» միջազգային կոնֆերանսի

Մենք՝ «Երևան-2025» միջազգային կոնֆերանսի մասնակիցներս, հավաքվել էինք Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում նրա զարգացման հիմնական ուղենիշերի քննարկման և փորձի փոխանակման նպատակով: Լսելով ներկայացված զեկույցները, ծանոթանալով քաղաքային իշխանությունների կողմից մշակված զարգացման ծրագրերի հիմնական ուղղություններին՝ կոնֆերանսի մասնակիցներս ընդունեցինք հետևյալ **ԲԱՆԱԶԵՎԸ**.

Մենք գտնում ենք, որ Երևանի համաչափ զարգացման հիմնարար սկզբունքի անշեղ կիրառմամբ, ռազմավարական հիմնական թիրախներ ընտրված ծրագրերի իրագործմամբ աշխարհի հնագույն բնակավայրերից մեկը կարող է և պետք է դառնա միջազգային չափանիշներին համապատասխանող ժամանակակից, մրցունակ քաղաք:

Մենք համոզված ենք, որ Երևանի ապագան կանխորոշված է աշխարհի մայրաքաղաքների հարուստ փորձի ուսումնասիրման և դրանք, հաշվի առնելով որոշակի յուրահատկություններ, տեղայնացնելու ճանապարհով հստակ իրականացման քաղաքականությամբ:

Միաժամանակ **մենք կարծում ենք**, որ մշակվող ծրագրերը հնարավոր չեն լինի կյանքի կոչել առանց դրանց հրապարակային քննարկումների, քաղաքացիների շահագրգիռ խմբերի ակտիվ մասնակցության, քաղաքային իշխանությունների, տարբեր պետական մարմինների, գործարար շրջանակների ներդաշնակ համագործակցության:

Մենք լիահույս ենք, որ Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինը ունի այնկամքն ու ներուժը, որով ի գործու է իրականացնելու ապագային միտված հավակնոտ ծրագրերը:

Մենք կոչ ենք անում Հայաստանի եւ օտարերկրյա ներդրողներին, միջազգային ֆինանսատնտեսական հաստատություններին, քաղաքաշինության ոլորտի մասնագետներին օժանդակել քաղաքային իշխանություններին Երևանի

ենթակառուցվածքների բնականոն զարգացման, քաղաքային միջավայրի բազմազանության եւ պատմամշակութային ներուժի պահպանման գործում:

Ելնելով վերը նշվածից, ինչպես նաև ամփոփելով կոնֆերանսի աշխատանքները՝ մենք նպատակահարմար ենք գտնում.

1. «Հին քաղաք, նոր հեռանկարներ» խորագրով «Երևան-2025» կոնֆերանսում ներկայացված ծրագրերը, նախագծերը, կոնֆերանսի աշխատանքի արդյունքները ներկայացնել հանրությանը, կազմակերպել ծրագրերի, նախագծերի հանրային լուսմներ եւ քննարկումներ,
2. Երևանի ապագային միտված ծրագրերի մշակմանը ակտիվորեն մասնակից դարձնել ոչ միայն մասնագետներին ու փորձագետներին, այլև մայրաքաղաքի շահագրգիռ բնակչությանը՝ բոլորին ու յուրաքանչյուրին,
3. Բոլոր կարևորագույն ծրագրերն իրականացնել մայրաքաղաքի համաչափ զարգացման հիմնարար սկզբունքից ելնելով,
4. Հստակեցնել յուրաքանչյուր ծրագրի մշակման և իրականացման իրատեսական ժամկետները, և այն պարբերաբար ներկայացնել հասարակությանը, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին և պոտենցիալ ներդրողներին:

Ընդունված է

10-ը հոկտեմբերի 2014 թվական

քաղաք Երևան